ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նաիրա Հունանյան	**Տաթևիկ Կարապետյան**	**Հայարփի Ջավրուշյան**	**Աննա Օվչյան**	**Գոհար Կիրակոսյան**
1. Ի՞նչ մեթոդներ են ներդրվել և կիրառվել դասերին (տեսական և գործնական)				
Ամբիոնի ուսումնական գործընթացը կազմակերպվում է առցանց՝ **Zoom** հարթակի և **Google classroom**-ի միջոցով: Օգտագործվում են ուսուցման գրեթե բոլոր մեթոդները, մասնավորապես՝ դասախոսություն, նյութերի ցուցադրում, վիրտուալ լսարանային քննարկումներ, հարցումներ, գործողությունների հետազոտում, ինչպես նաև ինտերակտիվ մեթոդ:	Ամբիոնի ուսումնական գործընթացը կազմակերպվում է առցանց՝ **Zoom** հարթակի միջոցով: Կիրառվել է ուսուցման՝ դասախոսություն, բացատրություն, տեսացուցադրում, թեստային հարցում (բանավոր, գրավոր) մեթոդները: Իսկ գործնական աշխատանքներն իրականացվել են տեսացուցադրման, խմբային քննարկման (տեսանյութերի և տեսաֆիլմերի դիտում, Power Point ծրագրով թեմաների ներկայացումներ, ռեֆերատների քննարկում) մեթոդի կիրառմամբ:	Ամբիոնի ուսումնական գործընթացը կազմակերպվում է առցանց՝ **Zoom** հարթակի միջոցով: Կիրառվել է ուսուցման՝ դասախոսություն, բացատրություն, տեսացուցադրում, վիրտուալ լսարանային քննարկումների և հարցումների մեթոդները: Գործնական դասերը իրականացվում են հիմնականում՝ **Google classroom**-ի և յուրաքանչյուր ուսումնական խմբի համար հատուկ բացված ֆեյսբուքյան էջերի միջոցով:	Ամբիոնի ուսումնական գործընթացը կազմակերպվում է հիմնականում առցանց՝ **Zoom** հարթակի միջոցով, ինչպես տեսական, այնպես էլ գործնական դասերը: Կիրառվել է ուսուցման՝ դասախոսություն, բացատրություն, տեսացուցադրում, վիրտուալ լսարանային քննարկումների և հարցումների մեթոդները (Power Point ծրագրով թեմաների ներկայացումներ, անհատական դեպքերի ներկայացում և վերլուծում /Case stydy/):	Ամբիոնի ուսումնական գործընթացը կազմակերպվում է հիմնականում առցանց՝ **Zoom** հարթակի միջոցով, ինչպես տեսական, այնպես էլ գործնական դասերը: *Կիրառվում է՝ դասախոսություն, հարցումներ, նյութերի ներկայացում քննարկումներ մեթոդները:*
2. Ներկայացնել նաև այլընտրանքային նոր մեթոդներ, որոնք դասապրոցեսները դարձրել են ավելի անհատականացված՝ միևնույն ժամանակ առավել բազմազան				
Դասավանդումն ավելի մատչելի և գրավիչ դարձնելու նպատակով բացվել է ֆեյսբուքյան հատուկ խումբ	Ծրագրով սահմանված նյութը բացատրվել է, որից հետո կատարվել են նյութի վերաբերյալ գրավոր աշխատանքներ՝ գիտելիքն	Դասի սկզբում ուսանողներին հանձնարարել հարց, իրավիճակ, որին նրանք կկարողանան պատասխանել միայն այն դեպքում, եթե	Առարկայի առանձնահատկությունից ելնելով կիրառվում է օնլայն սենյակներ, ընդհանուր օնլայն գրատախտակ, ընդհանուր	Առարկայի առանձնահատկությունից ելնելով nԻսանողներին նախապես ուղարկվում են տվյալ թեմային

ուսանողների համար՝ Cytology,Embryology, Histology, որտեղ տեղադրվել են անցած տարիներին դասախոսությունների տեսագրությունները, ինչպես նաև մանրալուսանկարները (micrographs)Կ Կազմակերպվել են փոքրիկ խմբերով քննարկումներ: Քննարկումներին մասնակցել են նաև բարձր կուրսերի ուսանողները՝ դրանք դարձնելով ավելի հետաքրքիր և բազմազան:	ամրապնդելու համար: Որոշ ուսանողներ ներկայացրել են իրենց հարցերը, ինչպես դասի ժամանակ, այնպես նաև այլ նախապես պայմանավորված ժամին: Օգտագործել ենք նաև համագործակցային ուսուցումը որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, որը ենթադրում է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:	ուշադիր են եղել ողջ դասի ընթացքում: Լավագույն պատասխանները և լուծումները գնահատվում են: Դա ուսանողին մոտիվացնում է դասին լինել առավելագույն չափով ընդգրկված և ակտիվ հետևել դասի զարգացմանը:	էկրանի օգտագործում մեթոդները: Ընդհանուր և անհատական օգտագործվող «chat», որի օգնությամբ հնարավոր է լինում դասաժամն օգտագործել ավելի արդյունավետ, միաժամանակ իրականացնելով անհատական աշխատանք: Կազմակերպվում է նաև թեմային առնչվող նոր տեսաֆիլմերի ցուցադրում, իրական անհատական դեպքերի և խնդրին վերլուծում /Case study/:	վերաբերվող լինքեր ինքնուրույն աշխատանքի համար:
3. Դասավանդման այլընտրանքային մեթոդները ակնկալվող որ՞ վերջնարդյունքն են ձևավորել տվյալ դասընթացի համար (դասավանդման մեթոդ-ձևավորվող վերջնարդյունք փոխկապակցվածություն):				
	Համագործակցային ուսուցումը որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցման կիրառման արդյունքում առավել արդյունավետ ձևավորվել են «Օտար լեզու» (Անգլերեն) ծրագրով սահմանված ԸՎ-8 վերջնարդյունքը, այն է՝ կարողանա ցուցաբերել կոլեկտիվում աշխատելու պատրաստակամություն, հանդուրժել սոցիալական, էթնիկ, դավանական և մշակութային	Առցանց դասավանդման ժամանակ ուսանողը ձեռք է բերում անհրաժեշտ բոլոր տեսական և գործնական գիտելիքներ, որը ապահովում է ծրագրով սահմանված գրեթե բոլոր վերջնաարդյունքների ձևավորմանը: Ուսանողի կողմից գործնական հմտությունների ձեռքբերման մասը լրացվում է համապատասխան վիդեոդասերով, ինչպես նաև ինքնորույն հանձնարարությունների՝		

	տարբերությունները:	ռեֆերատներ գիտահետազոտական ժամանակակից մեթոդների և սարքավորումների կիրառման մասին:		
4. Ուսումնական նյութերի մատուցման ի՞նչ ձևաչափ է ընտրվել:				
Ուսումնական նյութերը տրամադրվել են PPt ֆայլերի միջոցով, որոնք տեղադրվել են ուսանողների ֆեյսբուքյան համապատասխան խմբերի էջերում: Դասախոսությունների տեսագրությունները տեղադրվել են Google drive ում:	Մատուցման ձևաչափը մնացել է նույնը՝ դառնալով ավելի մանրակրկիտ: Շարունակվում է Ցուցադրման («Իլյուստրացիա») մեթոդի կիրառումը:	Ուսանողներին նախապես տրամադրվել է դասախոսությունների նյութերը՝ ppt ձևաչափով, ինչպես նաև առաջատար գիտական կենտրոնների վիդեոձայնագրություններ, առաջատար ամսագրերից հոդվածներ և ժամանակակից գրականություն համապատասխան թեմաների վերաբերյալ: Ի լրումն Zoom հարթակում անցկացրած դասախոսության տեսաձայնագրությունը ևս ուղարկվել է ուսանողներին, որպես ուսումնական նյութ:	ZOOM հարթակի միջոցով նյութերի ppt ձևաչափով ներկայացում, FB խմբում առնչվող նյութերի տեղադրում, FB հաղորդագրություններով ուսանողների հետ կապի պահպանում: Facebook հարթակում ստեղծվել է անհատական խումբ՝ Medical Psychology անվամբ, որտեղ տարբեր ձևաչափերով ուղարկվում է ուսումնական նյութերը՝ դասախոսությունները, պատկերային ներկայացում /PPT/, գիտական գրականություն:	Դասախոսություններ, պրեզենտացիաների տեսքով, ներկայացվել են ինչպես ZOOM հարթակի միջոցով, այնպես էլ ֆեյսբուքյան առանձին խմբերի էջերի միջոցով:
5. Ի՞նչ հանձնարարականներ ու առաջադրանքներ են տրվել ուսանողներին				
Ուսանողներին տրվել են ինչպես դասախոսության նյութի մանրակրկիտ ուսումնասիրման, այնպես էլ ինքնուրույն աշխատանքի հանձնարարականներ, վերջինիս պարագայում դասախոսների կողմից	Ուսանողներին մատուցված քերականական և թեմատիկ նյութի վերաբերյալ տրվել է համապատասխան տնային առաջադրանք, որը ստուգվել է հաջորդ դասաժամին, որից և գնահատվել է ուսանողի ընթացիկ ակտիվությունը: Իսկ որպես ինքնուրույն աշխատանք	Ուսանողներին հանձնարարվել է ինքնուրույն աշխատանքներ ռեֆերատների (essay) և power point slide show տեսաներկայացումների տեսքով, նախապես հանձնարարված թեմաների վերաբերյալ: Գործնական պարապմունքներին	Թեմային առնչվող տեղեկատվություն է տեղադրվել FB խմբում, անմիջապես դասից հետո, հաջորդ դասին ներկայացնելու հանձնարարությամբ: Գործնական դասի ընթացքում համացանցից թեմային առնչվող առանձին ենթաթեմա	Ուսանողներին առաջարկվել է ինքնուրույն կազմել պրեզենտացիաներ նախապես հանձնարարված թեմաների վերաբերյալ:

կատարվել են լրացուցիչ խորհրդատվություններ՝ կիրառելով messenger-ի հաղորդակցման հնարավորությունները:	ուսանողներին տրվել են էսսեների թեմաներ, որոնք նրանք գրավոր պետք է ներկայացնեն դասախոսին սահմանված ժամկետում:	քննարկվել են նախապես հանձնարարված ուսումնական նյութեր ppt և գրականություն, որոշ ուսանողների նաև գիտական հոդվածներ: Հանձնարարվել է պատրաստվել հարցման՝ անցած նյութի վերաբերյալ, որը կապահովի ուսանողին ընթացիկ ակտիվության համար նախատեսված միավորներով:	է ներկայացվել յուքանչյուր ուսանողին, ով ուներ: Աշխատանք գիտական գրականության հետ. յուրաքանչյուր ուսանողի համար, նյութերը և թեմաները նախապես տեղադրվում է Facebook հարթակում ստեղծված խումբի էջում:	
6. Ինչպե՞ս են ստուգվել դրանք				
Տեսական գիտելիքների ստուգումը կատարվել է գործնական պարապմունքների ընթացքում (ռեֆերատներ, պրեզենտացիաներ) կազմակերպված հարցումների միջոցով, արտաժամյա անհատական հանդիպումների ժամանակ Zoom հարթակի միջոցով: Google classroom-ի օգնությամբ տրվել են նաև տեստային առաջադրանքներ՝ ստուգելով և գնահատելով ուսանողների գիտելիքները:	Նախապես տրված ինքնուրույն աշխ. թեմաները ուսանողները մինչև դասընթացը ուղարկում են ետ, քննարկման համար յուրաքանչյուր ուսանողի հետ կազմակերպվում է անհատական զրույց առցանց հարթակի կամ վիդեո զանգի միջոցով, հետո դասի ժամանակ խմբային քննարկվում և ստուգվում են: Ուսանողներին տրվել են ռեֆերատների, էսսեների թեմաներ, որոնք նրանք պատրաստում են 2 շաբաթվա ընթացքում, էլ. տարբերակով ուղարկում դասախոսին, վերջնական շտկումներից հետո այն ներկայացնում գործնական դասի ժամանակ:	Ռեֆերատները (essay) և ppt տեսաներկայացումները կարճ ներկայացվել են գործնական պարապմունքի ընթացքում, որից հետո ուսանողը պատասխանել է դասախոսի և ուսանողների հարցերին: Ընթացիկ հարցումները կատարվել են բանավոր Zoom հավելվածով կամ գրավոր google classroom հարթակում:	Դասի ընթացքում ուսանողները բանավոր ներկայացրել են տրամադրված նյութը, որի ընթացքում իրականացվել է մտագրոհ: Ուսանողները 10 րոպեի ընթացքում պատրաստած նյութը ուղարկել են օնլայն հաղորդագրությամբ՝ օգտվելով ZOOM և FB ցանցերից: Ապա բոլորի մասնկացությամբ յուրաքանչյուր ուսանող ներկայացրել է կատարած աշխատանքը: Բանավոր հարցում /անհատական դեպքերի վերլուծման /Case study/, պատկերային ներկայացման, հարցադրումների ընթացքում տրված պատասխանների	Ուսանողներն իրենք են ներկայացրել իրենց պրեզենտացիաները օնլայն տարբերակով:

			որակական գնահատում:	
7. Կիրառվել է արդյոք՞ հետադարձ կապի մեխանիզմը՝ ուսանողին տրամադրելով առաջադրանքի վերաբերյալ մեկնաբանություններ, առաջարկվող ուղղումներ և շտկումներ: (Այլ կերպ ասած՝ կարևոր է հավաստել, որ ուսանողի մասնագիտական աճը ապահովվում է և ոչ թե վտանգվում):				
Ամենօրյա ռեժիմում ուսանողները կարողացել են բոլոր անհասկանալի հարցերը քննարկել դասախոսների հետ messengerի միջոցով դրանք ուղարկելով համապատասխան մասնագետներին:	Հետադարձ կապի մեխանիզմը հեռավար ուսուցման ժամանակ առավել արդյունավետ է կիրառվում, քանի որ ուսանողը պետք է զգա, որ իր կարծիքը նույնպես լսելի է: Հետադարձ կապը կիրառվում է Google classroom, gmail.com, FB սոց.կայքի օգնությամբ:	Ամենօրյա ռեժիմում ուսանողները կարող են դիմել իրենց դասախոսին ցանկացած հարցի վերաբերյալ: Մասնավորապես առավել օգտագործվում է ֆեյսբուքյան խմբային էջը, վայբերը և մեսինջերը:	Հետադարձ կապի մեխանիզմը գործում է անդադար: Երբեմն ուսանողը չի ընկալում տրված նյութը և անհրաժեշտություն է առաջանում այն կրկին լսել, կամ պարզաբանել դասախոսի հետ առանձին: Ուսանողի հետ պայմանավորվում ենք, լրացուցիչ պարզաբանման համար և տրվում գրավոր պատասխան:	Պրեզենտացիաները ներկայացվել են ուղղումից և լրացումից հետո
8. Դասավանդողները ի՞նչ նորարարություններ են կիրառել. եթե այս ընթացքում բուն դասապրոցեսից զատ կազմակերպվել են լրացուցիչ հանդիպում-խորհրդատվություններ ուսանողների հետ, անցկացվել են հեռավար մաստեր-կլասներ տվյալ մասնագիտության ոլորտի առաջավոր և փորձառու մասնագետների հետ, կարևոր է դրանց ևս անդրադառնալ:				
Դասախոսների կողմից կատարվել են լրացուցիչ առցանց հանդիպում-խորհրդատվություններ և նյութի քննարկումներ ուսանողների հետ:	Լրացուցիչ խորհրդատվություններ կազմակերպվել են՝ ելնելով ըստ անհրաժեշտությունից, ինչպես անհատական, այնպես նաև փոքր խմբերով: Իսկ ինչ վերաբերում է մաստեր-կլասներ հանդիպումներին, ապա նշենք, որ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն օգտվել է ՈԱԱԿ-ի կողմից առաջարկված ուղեցույցներից (https://bit.ly/2UT1kHp, https://bit.ly/3aAlnRG, https://bit.ly/39suhzi), որոնց	Հաշվի առնելով առցանց դասերի ընձեռած լայն հնարավորությունները, հատկապես անկախ լինելով գտնվելու վայրից և ժամանակից, լսարանին ներկայացվել են այն գիտահետազոտական աշխատանքները, որոնց իրականացման գործընթացին մասնակցում են անձամբ դասախոսները: Իրականացվել է քաղցկեղի և շաքարախտի լաբորատոր կենդանիների փորձարարական մոդելների	ZOOM հարթակի միջոցով ներկայացվել են տեսադիտումներ թեմայի վերաբերյալ ոլորտի լավագույն մասնագետների ներկայացմամբ: Կազմակեպվել են լրացուցիչ հանդիպումներ՝ ուսանողներին հնարավորություն տալով լիարժեք ներկայացնել կատարած աշխատանքները:	

	միջոցով ստացել ենք տեղեկատվություն հեռավար ուսուցումն առավել արդյունավետ իրականացնելու վերաբերյալ:	ներկայացում լաբորատոր նկարների և վիդեոդասերի միջոցով:		
9. Հեռավար ուսուցման մեկ ամսվա համար (հնարավոր է նաև երկարաձգման սցենարը) հարկավոր է մշակել տեղեկատու թերթիկ կամ համառոտ ուղեցույց ուսանողի համար. նշել նրա պարտականությունները, քանի առցանց դասի պարտադիր պետք է մասնակցի, իսկ եթե նման պահանջ չի դրվում, ինչ աշխատանք պետք է կատարի, որ ստուգվի նրա գիտելիքը ……., նկարագրել նաև ուսանողի գնահատման ձևերն ու չափանիշները):				
	Ֆորսմաժորային իրավիճակում ստիպված ոսումնական գործընթացը կազմակերպվում է հեռավար, որն այնքան էլ համահունչ չէ ԱԲՀ-ի 2017-2022թթ. ՌԶԾ-ին և վարած քաղաքականությանը: Սակայն ԱԲՀ-ի ղեկավարությունը շատ արագ կարողացավ այն վերանայել և տեղայնացնել ներկայիս իրավիճակին: Եթե ուսումնական գործընթացի արդյունքում ուսանողին տրվելու է որակավորման փաստաթուղթ, ապա խոսք լինել չի կարող ուսանողի շարունակական բացակայությունը դասընթացներից, հատկապես՝ մասնագիտական առարկաներից, քանի որ գործող գիտելիքների ստուգման և գնահատման գարգով սահմանված ուսանողի մասնակցությունը դասընթացներին, թեկուզև՝	ԱԲՀ-ի ուսանողը պարտավոր է հետևել և ակտիվ մասնակցել համալսարանի կողմից կազմակերպվող բոլոր տիպի դասընթացներին, այդ թվում նաև առցանց: Համաձայն ԱԲՀ-ում գործող ուսումնական գործընթացի իրավական փաստաթղթերի, ուսանողը նաև պետք է մինչև կիսամյակի ավարտը ներկայացի իր կողմից կատարված ինքնուրույն աշխատանքները: Ներկա իրավիճակում համալսարանի ղեկավարությունը ամեն ինչ անում է ապահովելու ուսումնական գործընթացի անխափան կազմակերպումը: Ինչ վերաբերում է գիտելիքների ստուգմանը, ապա ըստ գործող գիտելիքների ստուգման և գնահատման կարգի այն կիրականացվի:	Անկախ իրավիճակից, ուսանողը պետք է ներկայացնի յուրաքանչյուր թեմային առնչվող ոչ տպատառ գրվածքով 4 էջանոց տեղեկատվություն: Հեռավար ուսումնական գործընթացը առայժմ գտնվում է փորձարկման փուլում: Այն երկարաձգելու արդյունքում հնարավոր է առաջարկվեն ուսանողների ակտիվությունը խթանող դասավանդման այլ մեթոդներ, գիտելիքների ստուգման նոր համակարգեր:	ՈՒսանողները մասնակցում են առցանց դասերի ըստ դասացուցակի, կապնվում դասախոսի հետ եթե ունենում են հարցեր: Գնահատվում են ինչպես թեստային հարցումների, այնպես էլ՝ բանավոր հարցումների միջոցով:

	հեռավար, պարտադիր է:			
10.Ամփոփիչ հաշվետվության մեջ ներկայացնել նաև հեռավար ուսուցման արդյունքում կուտակված դրական փորձը, որը արտակարգ դրության ավարտից հետո ամբիոնները կարող են զարգացնել և կիրառել դասավանդման և ուսումնառության պրոցեսում				
Անհրաժեշտ է նշել, որ առցանց դասավանդման պարագայում հիմնականում տուժում է գործնական հմտությունների ձեռքբերումը: Սակայն առցանց դասերի կազմակերպումը դրականորեն կանդրադառնա հետագա դասապրոցեսի կազմակերպման վրա, քանի որ և՛ուսանողները, և՛ դասախոսները ավելի հմտացան հեռահար ուսուցման իրականացման մեջ: Հետագայում այն կարելի կլինի կիրառել որպես ևս մեկ արդյունավետ աշխատանքի կազմակերպման և ստուգման հնարավորություն:	Հեռավար ուսուցման արդյունքում բարձրացվել է ուսուցման որակը ժամանակակից տեխնոլոգիաների, ծավալուն էլեկտրոնային գրադարանների օգտագործման միջոցով: ժամանակակից ծրագրային և տեխնիկական միջոցների կիրառմամբ իրականացվող ուսուցումը էլեկտրոնային կրթությունը դարձնում է առավել արդյունավետ, իսկ ուսուցման գործընթացը դառնում է ավելի դինամիկ՝ հիմնվելով սովորողի և ուսուցանող համակարգի ակտիվ փոխգործակցության վրա: Սակայն կան որոշ Թերությունները՝ տարբեր ժամային գոտու խնդիրը, գիտելիքների ստուգման ժամանակ սովորողի ինքնությունը պարզելը, մի շարք անհատական և հոգեբանական պայմաններ, նաև խիստ ինքնակարգապահություն, տեխնիկական սահմանափակ հնարավորությունները, սոցիալական մեկուսացումը. կարծիքների բազմազանությունը: Կան նաև	Ուսանողի կամ դասախոսի դասին ներկա գտնվելու անհնարինության դեպքում հեռավար դասերի անցկացման գործիքների միջոցով կարելի է շտկել տվյալ հարցերը: Հնարավոր է լրացուցիչ, վերլուծական հանդիպումներ կազմակերպել տարբեր դասախոսություններին վերաբերվող անհասկանալի հարցերի շուրջ: Արտակարգ իրավիճակի ընթացքում հեռավար դասերի անցկացման ընթացքում ձեռք բերված հմտությունները, հետագայում թույլ կտա առավել խնայողաբար օգտագործել դասաժամը, կամ հարգելի պատճառով բացակայած ուսանողների համար առանձին ընթացիկ հարցում կազմակերպել առարկայի համար հատկացված դասաժամից դուրս: Իրավիճակից ելնելով, դասախոսը օգտագործել է մի շարք հավելվածներ, որոնք մինչ այդ մնում էին ստվերում կամ ընդհանրապես չէին	Առցանց դասընթացի առավելությունն են՝ հարմարավետություն, ժամանակի խնայում, ներգրավածության բարձրացում: Լսարանում խմբային աշխատանք իրականացնելիս, ուսանողները առանձին ընդհանուր գրատախտակ չեն ունենում կամ ընդհանուր դիտման համար ինֆորմացիոն աղբյուր: ZOOM համակարգի միջոցով հնարավոր է միաժամանակ տարբեր թեմաների դիտում իրենց հեռախոսների միջոցով, որն ավելի հարմար է, քան մի կտոր թղթի վրա տաբեր կողմերից նշում անելը և ընդհանուր եզրակացության գալը: Խմբային աշխատանքի ժամանակ սովորաբար մեկ կամ երկու հոգի են ներկայացնում նյութը, ZOOM համակարգի միջոցով կարելի նկատել նաև մյուս ուսանողների ներգրավվածությունը՝ իրենց կողմից կատարված գրավոր մեկնաբանություններին	Հեռահար ուսուցման պատճառով ստեղծվեցին խմբեր, որոնց միջոցով կապը ուսանողների հետ ավելի սերտ է, ցանկացած ժամանակ կարող են հարցեր գրել եվ ստանալ իրենց պատասխանները:

	դրական կողմեր՝ տնային աշխատանքների ստուգումը էլ.հարթակի միջոցով, ինչպես նաև՝ լրացուցիչ արտաժամյա գործնական դասերի կազմակերպումը (ինչը արվում էր, սակայն պարտադիր բնույթ չէր կրում), որն է՝ խորհրդատվության ժամի պարտադիր լինելը:	կիրառվում: Այսուհետ այդ հավելվածներն առավել կհեշտացնեն և կարագացնեն հատկապես գիտելիքների ստուգման գործընթացը:	համապատասխան: Դասընթացը տեխնիկապես կառավարելի է, հասանելիությունը տարբեր ժամային գոտիներում և պայմաններում, լրացուցիչ դասընթացների կազմակերպելը, ուսանողների ակտիվություն, հետաքրքրություն, պատասխանության զգացում հեռավար ուսումնական գործընթացի պայմաններում: Նկատվում է անկաշկանդ արտահայտվելու կարողություն, թույլ առաջադիմություն ցուցաբերած ուսանողների ակտիվություն և հետաքրքրվածություն ուսումնական գործընթացի նկատմամբ:	